Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 19-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացան 2 սարկավագներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Արմեն սրկ. Դևեջյանը վերակոչվեց Տ. Կտրիճ քահանա, իսկ Վարդան սրկ. Մովսիսյանը՝ Տ. Շահան քահանա:

«Ահա այսօր՝ Սրբոց Վարդանանց նվիրական տոնի օրը, երբ մենք ողջ Եկեղեցով նշում ենք Ավարայրի ճակատամարտում հոգևոր և բարոյական հաղթանակ տարած Ս. Վարդան Մամիկոնյանի և նրա հետ նահատակված 1036 զինվորների անմար հիշատակը, այսօր մեզ համար այն դառնում է ավելի նվիրական և ավելի սուրբ, որովհետև այսօր կարծես թե ավելի քրիստոնյա ենք դառնում, քանզի Վարդանանց ոգին և շունչն են ներշնչում մեզ»,- նշեց ձեռնադրող Սրբազան Հայրը (տե՛ս էջ 41): Վազգեն Սրբազանը, շնորհավորելով նորոգ ձեռնադրյալ քահանաներին, մաղթեց, որ իրենց ողջ կյանքում որպես ուղեկից ունենան Ս. Վարդանանց անպարտելի ոգին և նրանց աներեր հավատքն առ Աստված:

Ձեռնադրությունից հետո Ավագ Ս. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հայրերն ու միաբանները և, համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը, շնորհավորեցին նրանց:

Վարդանանց տոնին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում նշվում է նաև Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրը: Այս առիթով Ս. Պատարագի ընթացքում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագից հետո Մայր Աթոռում Գևորգյան Հոգևոր ճեմարանի սաների մասնակցությամբ տեղի ունեցավ նաև հանդիսություն՝ նվիրված Ս. Վարդանանց հերոսամարտին:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, Սրբազան Հայրը կատարեց նաև վեղարի տվչություն: Մխիթարյան հայրերից Տ. Տաճատ ծայրագույն վարդապետ Ցարտրմյանը, իր հավատարմության ուխտը կատարելով Իջման Ս. Սեղանի առջև, Սրբազան Հոր ձեռքից, որպես կուսակրոն քահանա, ստացավ վեղար և համալրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

Այսուհետև Տ. Կտրիճ քհն. Դևեջյանը և Տ. Շահան քհն. Մովսիսյանն իրենց ծառայությունը կբերեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, իսկ Տ. Տաճատ ծ. վրդ. Ցարտրմյանը՝ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմում Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի առաջնորդության ներքո:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ